


H22

Խորհրդային բալոր յերկինքներ, միացել

ՀԱՄ Կ (Բ) Կ

ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄԻ
ԲԱՆԱԶԵՎԵՐԸ

1935 ԴԵԿԵMBER 25



{ ԱՅԿՈՒՍՉՐԱՑ • 1935

ՀԿՊՀ
Z-22

23 SEP 2006

Ար

Պայմանագիր բալու յերկիրաների, միացնել

1 DEC 2009

ՀԱՄ Կ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄԻ
ՊԼԵՆՈՒՐԻ ԲԱՆԱԶԵՎԵՐԸ

1935 թ. ԴԵԿԵMBERԻ 25

ՀԱ(Բ) Ա. Ա. ՀՐԱ.ՏՈ.ՐԱ.ԿՉՈՒԹ-ՑՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1936

18 SEP 2013

H22

Ամբողջի Նշ. Մակինց
Քարգմ. Հ. Թուրքյան, կոնսոր. սրբազր. Լ. Արովյան,
ութագրէէ Վ. Զիդյանին, տեխն. խմբ. Տ. Խաչանը, Վահան Գևորգյան

Գլավլիտի լիազոր 1040, հրատ. № 344,
պատվեր № 4, տիրուաֆ 10,000, ինուերսու Ա-80

**Հայկական սպառագի տերթակ, Ծերեվան
Ալակավերդյան № 27**



РЕЗОЛЮЦИИ ²⁵ ПЛЕНА УМА
ЦК ВКП(б), ПРИНЯТЫЕ
25 ДЕКАБРЯ 1935 Г.
Архивный фонд, № 100

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՑԵՎ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԸ
ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄ

Առաջին և յերկրորդ հնդամյակների տղանի հաղթական իրականացումն ապահովեց ժողովրդական տնտեսության տեխնիկական ամբողջ բաղայի վերելքը նոր, բարձր առարկանի : Ծնորհիվ յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման ճիշտ քաղաքականության վոր կիրառված և դասակարգային թշնամիների, ու կուսակցության և բանվոր դասակարգի ներսում նրանց գործակալության դեմ մղած պայքարում, խորհրդային յերկրը տեխնիկապես վերադիմեց և ժողովրդական տնտեսությունը վերակազմակերպվեց սոցիալիստական եկոնոմիկայի հիման վրա :

Կուսակցության ու պետության մեծագույն ջանքերով, բանվոր դասակարդի հերոսական պայքարով, ամբողջ յերկրի ջանքերով կարճ ժամանակում ստեղծված ե սոցիալիստական հզոր ծանր արդյունաբերություն, վորը սարքավորված ե տեխնիկայի վերջին խոսքով և դարձել է ժողովրդական ամբողջ տնտեսության վերակառուցման բաղա։

Ստեղծված ե մեքենաշինական և հումքային բաղա՝ թեթև արդյունաբերության արագ աճման և տեխնիկական նոր հիմքերա վերակառուցելու համար այն։

Սննդարդյունաբերական, տնայնադորձական մանր և միքանի խոչոր ձեռնարկությունների փոխարեն ստեղծված ե ամբողջ ԽՍՀՄ-ի մասշտաբով միավորված Սննդարդյունաբերական ինդուստրիա։

Անտառամշակության տնայնադորձական, փարձակալական ձեռնարկությունների փոխարեն ստեղծված ե միավորված խոշոր անտառային արդյունաբերություն։

Յերկաթուղային տրանսպորտը, վորչ հետ եր մնում ժողովրդական տնտեսության աճող կարիքների բավարարման դործում, արագորեն վեր և բարձրանում և տեխնիկապես վերաղին լում ե։

Այս բոլոր փաստերը— կապիտալիստական վերջին դասակարգի՝ կուլակության և շահագործող դասակարգերի մնացորդների վերացման, խորհրդային յերկրում շահագործումը վոչնչացնելու և աշխատանքը պատվի, փառքի, արիության ու հերոսության գործ դարձնելու, բանվորների նյութական զրությունը արմատապես բարելավելու, նրանց քաղաքական զիտակցության ու ակտիվության աճման հետ միասին հասցըին մեր յերկրում ստախանովյան շարժման բուռն զարդացմանը։

Ստախանովյան շարժումն արդյունք ե մեր այն ամբողջ զարդացման, վոր մենք կատարել ենք սոցիալիզմի ուղիով ուրդյունք և սոցիալիզմի հաղթանակի՝ մեր յերկրում։

Ստախանովյան չարժումը նշանակում ե
աշխատանքի կազմակերպումը նոր ձևով,
տեխնոլոգիական պրոցեսների ուսունալա-
ցումը, աշխատանքի ճիշտ բաժանումն ար-
տադրության մեջ, վորակյալ բանվորների
աղատումը յերկրորդական, նախավարաս-
տական աշխատանքից և աշխատանքի տեղի
լավագույն կազմակերպումը, աշխատանքի
արտադրողականության արագ աճման ա-
ռահովումը, բանվորների ու ծառայողների
աշխատավարձի զգալի աճման ապահովու-
մը:

Ստախանովյան չարժումը բարձրացնում
ե բանվոր դասակարգի կուլտուրական-
տեխնիկական մակարդակը, ջախջախում ե
տեխնիկական հին նորմաները, մի չարք
դեպքերում գերազանցում ե առաջավոր կա-
պիտակիստական յերկիրների աշխատանքի
արտադրողականությունից, ապահովում ե
սպառման առարկաների արտադրության
արագ աճումը և նրանց եժանացումը, ա-
ռահովում ե մեր յերկրի վերածումն ամե-

նից ավելի ունեոր յերկրի, և այդպիսով
ամրացնում ե սոցիալիզմի դիրքերը՝ հա-
մաշխարհային մասշտաբով:

Կազմիտակիստական յերկիրներում աշխա-
տանքի արտադրողականության լուրջ աճու-
մը պարտադիր կերպով կառաջացներ ըլ-
բաղված բանվորների թվի կրճատում, աշ-
խատավարձի անկում, գործազրկության ա-
ճում և աղքատության աճում. վորովհետեւ
կապիտալիզմը չի կարող չկաշկանդել յերկ-
րի արտադրողական ուսերը: ԽՍՀՄ-ում,
ընդհակառակը, աշխատանքի արտադրողա-
կանության բուռն աճումը պարտադիր հեր-
պով տանում և դեպի արտադրության ճա-
կատի ընդարձակում, գործող դաշտյահների
ու աղքատատների թվի ավելացում և հետե-
վապես զբաղված բանվորների թվի աճում,
նրանց աշխատավարձի աճում, քանի վոր
խորհրդային հասարակակարգն աղատելով
արտադրողական ուժերը կապիտալիստական
կապանքներից, չի կարող չտանել դեպի
նրանց հարածում զարդացումը:

Կապիտալիստական յերկիրներում աշխատանքի արտադրողականության լուրջ աճումը ամենավտանգավոր դժվարություն կտտեղծեր բուրժուազիայի համար, քանի վոր նա կհասցներ նախ՝ արտադրանքի բուռն աճման, վորը վտանգավոր ե հանաժամի պայմաններում։ յերկրորդ՝ նա կհասցներ սպառման առարկաների եժանացման, վորը նույնպես վտանգավոր ե կապիտալիզմի համար, վորովհետև ժամանակակից կապիտալիզմը դերադասում ե ապրանքները վաճառել մենաչնորհային գներով։ ԽՍՀՄ մեջ, ընդհակառակը, աշխատանքի արտադրողականության բուռն աճումը, արտադրանքի աճումը և նրա եժանացումը վտանդչեն հանդիսանում, այլ մեծագույն նվաճում, վորը տանում ե դեպի սպառման առարկաների առատություն, դեպի նրանց եժանացում և դեպի ուեալ աշխատավարձի աճում, քանի վոր խորհրդային հասարակակարգը չղիտե ճգնաժամեր, նա չի ընդունում մենաչնորհային գները և իբրև տնտե-

սական նողատակ իր առջև դնում ե վոչ թե բարձր շահույթի վաստակումը՝ մասնավոր անձերի համար, այլ աշխատավորների նյութական դրության անշեղ վերելքը, աշխատավորների, վորոնք ամբողջ ժողովորդական տնտեսության հիմնական ու ամենից ավելի արժեքավոր ուժն են հանդիսանում։

Արդյունաբերության ու տրանսպորտի միքանի տնտեսավարներ չեն ըմբռնել ստախանովյան շարժման իմաստը և դերի յեն ընկել մեր ձեռնարկությունների իջեցված նախադաշտին կարողությունների ձեռքը, կարողություններ, վորոնք իր ժամանակին հաշվի յեն առնված յեղել՝ նկատի ունենալով մեր բանվորների ու տեխնիկական կաղըերի հետամնացությունը։ Հենց այդ նույն փաստը՝ իջեցված նախադաշտին կարողությունների հասնելու առթիվ առաջ յեկածինքնագության հետ միասին, հանդեցրեց այն բանին, վոր մի քանի աշքի ընկնող և անցյալում յերկրի ինդուստրացման ասպա-

թեղում անվիճելի ծառայություններ ունեցող տնտեսավարներ վո՛չ միայն չկարողացան զլիսավորել ստախանովյան շարժումը, այլ սկսեցին նույնիսկ արդելակել այն:

Բացի այդ, ինժեներ-տեխնիկական աշխատողների շարքում, առաջադիմական տարրերի հետ միասին, կա նաև ինժեներների ու տեխնիկների մի մաս՝ դաստիարակված կապիտալիստական արտադրության փորձի հիման վրա և իր զդալի մասով դաստիարակված նախահեղափոխական ռուտական արդյունաբերության հետամհաց տեխնիկայի հիման վրա, վորն առաջին ետապներում ստախանովյան շարժման սկզբում մնաց:

Այս հանդամանքները դժվարացնում են ստախանովյան շարժման ծավալումը:

Խնդիրն այն է, վորպեազի ոգտադորձելով արդյունաբերության կուտակած վողջ գետական պաշարն ու տեխնիկական փորձը, հրաժարվենք տեխնիկայի թերութագործումից, վորն անխուսափելի յե կապիտալիս-

տական հասարակակարգում, վորտեղ բանվորն աշխատում ե վո՛չ թե իր համար, վո՛չ թե Կոլեկտիվի համար, այլ կապիտալիստի համար, վորտեղ տնտեսությունը զարգանում ե վո՛չ թե պլանով՝ ամբողջ ժողովրդի ոգտին, այլ տարերայնորեն՝ առանձին կապիտալիստների ոգտին, — և համընթաց քայլենք ստախանովյան շարժման հետ, դիմավորենք այն ու ուղնենք նրան՝ ստեղծելու աշխատանքի նոր, կապիտալիզմի համեմատությամբ բարձր արտադրողականություն:

Անհրաժեշտ է նախ և առաջ ջախջախել արդյունաբերության ու տրանսպորտի բոլոր ճյուղերի տնտեսավարների ու ինժեներատեխնիկական աշխատողների սրահպահնդական մասի կողմից ստախանովյան շարժման նկատմամբ դեռևս ցուցաբերվող ընդդիմադրությունը, և յերկրորդ՝ ամեն կերպ ողնել զլիսավորելու այդ շարժումը. այն ողնութեավարներին, ինժեներներին ու տեխնիկներին, վորոնք ընդառաջ են գնում ստա-

խանովյան շարժմանը, բայց դեռ չեն կարողացել զլիսալորել այն:

Կուսակցական ու պրոֆմիութենական կաղմակերպությունները պետք ե մերկացնեն դասակարգայնորեն խորթ տարրերին, վորոնք փորձում են վնասել ստախանովականներին, և ստախանովյան շարժման շուրջը համախմբեն բավորների ամենալայն մասսաներին:

Անհրաժեշտ ե ներկայիս տեխնիկական նորմաները, վորպես հնացած, փոխարինել ավելի բարձր նորմաներով և համապատասխանորեն փոխել արտադրանքի նորմաները՝ նրանց վորոշ բարձրացման իմաստով, սակայն այնպես, վոր պրոցեսիվ դործարքի պայմաններում պահպանվեն ներկայիս դնահատումները, իսկ աշխատավարձի ֆոնդը՝ ստախանովյան շարժման աճումը նկատի ունենալով՝ մեծացվի:

Կենտրոնի պլենումը դատավարությունը արտադրանքի նորմաներ սահմանելու ներկայումս դոյություն ունեցող սիստեմն ու

պլակտիկան, վորոնք չեն համապատասխանում ԽՍՀՄ-ի առաջավոր տեխնիկայի ձեռք բերած մակարդակին և չեն համապատասխանում աշխատանքի արտադրողականության հետագա վերելքի ինդիրին:

Այսպիս կոչված վորձնական-վիճակաղրական նորմաների գերակշռումը նորմավորման պրակտիկայում, իր արտադրության տեխնիկային թույլ տիրապետող րանդուրի արտադրանքին հավասարվելը, արտադրանքի նորմաներ սահմանելիս ձեռնարկության ու ցեխի արտադրական հնարավորությունների աճման, բանվորի եներգովինքության աճման, նրա տեխնիկական ու կուտուրական մակարդակի աճման իսկական վերլուծության բացակայությունը, —այս բոլորը, աշխատանքի նորմավորման գոյություն ունեցող պրակտիկան արդեւակ են դարձնում բանվորների աշխատանքի արտադրողականության ու աշխատավարձի հետագա աճման ճանապարհին:

Նորմաներ սահմանելու գոյությունը ու

Նեցող պրակտիկայի սնանկությունն ու վը-
նասակարությունը հատկապես ակնառու
կերպով յերեսում և այն բանից, վոր արտա-
դրանքի նոր սահմանված նորմաները՝ դը-
րանց սահմանումից անմիջապես հետո՝
հսկայական չափով գերակատարվում են, և
այն ել վոչ թե առանձին բանվորների, այլ
բանվորության նշանակալից մասսայի կող-
մից :

Կենտկոմի պլենումն առանձնապես ան-
թույլատրելի յե համարում, վոր արտա-
դրության կաղմակերպման այդ պատաս-
խանատու բնազավառն ամենուրեք ամբող-
ջությամբ վստահել են այսպես կոչված
նորմագործներին ու տարիվիկատորներին,
իսկ ցեխերի պետերը, ինժեներները, տեխ-
նիկներն ու վարպետները և ձեռնարկու-
թյունների ղեկավարները կամ բոլորովին
չեն զբաղվում նորմագորման հարցերով,
կամ թե մեքենայորեն շտամպում են նոր-
մագործների ու տարիվիկատորների մշա-
կած արտադրանքի նորմաները :

Կենտկոմի պլենումն անհրաժեշտ և հա-
մարում .

ա) Արտադրանքի նորմաները սահմանե-
լիս յենել ցեխի ու ձեռնարկության ար-
տադրական հնարավորությունների խիստ
ստուգումից և ստախանովականների առա-
ջակոր արտադրական փորձը հաջոր առնե-
լուց .

բ) նորմագորման աշխատանքը և նրա
վիճակի համար պատասխանառվությունը
դնել ցեխի ու ձեռնարկության ինժեներ-
տեխնիկական անձնակազմի վրա՝ ձեռնար-
կության ղեկավորի անմիջական ղեկավա-
րությամբ .

գ) ձեռնարկություններում արտադրանքի
նոր նորմաներ սահմանելու աշխատանքի մեջ
լայնորեն նիրդբավել ստախանովական կադ-
րերը :

Վորպեսզի ստախանովայան շարժումը տա-
րածվի մեր ամբողջ յերկրում, վորպեսզի
մասսայական ստախանովայան շարժումը
չմեկնարանվի վորպես շուտափույթ անցնող



կամպանիա, վորագեսպի ողնենք ստախանու-
վականներին՝ հաղթահարելու այն խռըն-
դուսները, վոր կան նրանց ճանապարհին,
կուսակցական ու պրոֆմիութենական կաղ-
մակերպությունները պետք եւ ծեռնամուխ
լինեն ստախանովյան շարժումը զարդացնե-
լու գործին և ստախանովականների ջանքե-
րը կաղմակերպված հունի մեջ դնեն:

Անհրաժեշտ եւ առանց բացառության բո-
լոր ստախանովականներին ողնել լրացնե-
լու իրենց տեխնիկական գիտելիքները,
ստեղծելով նրանց համար այնպիսի հատուկ
տեխնիկական գասընթացներ, վորոնք չեն
պահանջում կարվել արտադրությունից:

Անհրաժեշտ եւ սիստեմատիկաբար ընդար-
ձակել պարտադիր կարդով տեխնիկական
մինիմումի ուսուցման յենթակա բավորների
ու բանվորուհիների ըլջանը:

Անհրաժեշտ եւ, վերջապես, տեխնիկական
մինիմումի ուսուցումը գարձնել ընդհանուր
և բոլոր բանվորների ու բանվորուհիների
համար պարտադիր, այդ կարևորագույն

գործը յենթարկելով բանվոր գասակարգի
կուլտուրական-տեխնիկական մակարդակը
մինչև ինժեներ-տեխնիկական աշխատողների
մակարդակին հասցնելու խնդրին:

Համ. Լ(բ)Կ կենտկոմի պլենումը հե-
տեյալ ձեռնարկումներն եւ հանձնարարում՝
ժողովրդական տնտեսության առանձին
ճյուղերի գծով:

ԾԱՐ ԽՆԴՐԻՍՏԻԱՅԻ ԱՍՊԱՐԵՅՈՒՄ

1. Ամբողջ թափով ծագալել ստախանով-
յան շարժումը, նախ և առաջ բոլոր արդյուն-
նահանդ ճյուղերում և առաջին հերթին
ոճին ու հանքային արդյունաբերության
մեջ, վորտեղ առաջին անգամ սկսվեց ու
ծագալվեց ստախանովյան շարժումը, նավ-
բարդյունաբերության մեջ, վարտեղ ստա-
խանովյան շարժումը մինչև այժմ չի զար-
դացել, սեպ ու գունավոր մետաղաձուլման,
շինարարության, շինանյութերի արտադրու-

թյան մեջ և վիմիական այն արտադրություններում, վորոնք սահմանափակված չեն հումքային ռեսուրսներով (առաջին հերթին սինթետիկ ամիակի ու աղոտային պարարտանյութերի, սինթետիկ կառուչուկի արտադրությունը և այլն) :

Այդ ճյուղերում ստախանովյան շարժման կազմակերպման հիմնական նպատակը պետք է լինի՝ առավելագույն չափով ավելացնել արտադրությունը և իջնել նրա ինքնարժեքը, յենելով նրանից, վոր արտադրական ծրագիրը միայն նվազագույն պարտադիր առաջարկանք է:

2. Մեքանաշինության բնագավառում ստախանովյան շարժումն ուղղված պետք է լինի՝ նախ և առաջ ավելի լավ ողտագործելու մետաղը, ավելի լավ ռդտագործելու աշխատութը, բարձրացնելու մեքենայի ժամանակի ոգտագործումը, արտադրանքի բարձր վորակը, տիրապետելու արտադրությանը և եժանացնելու տեխնիկական տեսակետից կատարելագործված ու վորակով անթերի

մեքենաների արտադրությունը գոյություն ունեցող սարքավորումով։

3. Ելեկտրոկայաններում և նկատրոցանցերում — անցնել առանց ավարիաների աշխատանքի, բարձրացնել սարքավորման ոգտագործումը՝ չողեկաթսային և տուրբինային աղբեկատների պարապուրդն ընթացիկ ու հիմնական նորոգման ժամանակ կրճատելու հաջլին, կրճատել վառելիքի տեսակարար ծախսումը։

4. Ծանր արդյունաբերության դեֆիցիտային հումք վերամշակող ճյուղերում, պայքար մղելով հանդերձ աշխատանքի բարձր արտադրողականության համար, ստախանովյան շարժումը պետք է ուղղված լինի հումքի տնտեսման գծով, այդ հումքն այլ նյութով փոխարինելու գծով, խոտաներից ու թափթփուկներից առաջացած կորուստների գեմ պայքարելու գծով, արտադրանքի քանակը մեծ չափով ավելացնելու, պատրաստի արտադրանքի ոգտա-

գործան ժամանակամիջոցն ավելացնելու
գծով։

5. Առաջարկել Ծանր Արդյունաբերու-
թյան ժողովրդական Կոմիսարիատին՝ 1936
թվականին ավարտել ձեռնարկություննե-
րի սարքավորումների տեխնիկական նորմա-
ների ու արտադրական կարողությունների
վերանայումը՝ դրանք բարձրացնելու ուղ-
ղությամբ, վերանայումն սկսելով ածխա-
հանքերից, յերկաթահանքերից, գունավոր
մետալորդիայի հանքերից և հարստացու-
ցիչ գործարաններից, նավթահանքերից,
նավթաթոր գործարաններից, դոմենյան վա-
ռարաններից, պողպատաձուլման ցեսերից,
զլանվածքի հաստոցներից, պղնձաձուլա-
րաններից, ցինկի, արճճի և ալյումինի
գործարաններից և հազվագյուտ մետաղնե-
րի ձեռնարկություններից, —սինթետիկ ա-
միակի և աղոտային պարաբանյութերի,
ծծմբաթթվի, ֆոսֆորային պարաբանյու-
թերի, սինթետիկ կառուչուկի արտադրու-
թյուններից, անիլ ներկերի արդյունաբերու-

թյունից և այլն, ինչպես և ցեմենտի գոր-
ծարաններից ու շինանյութերի մյուս ձեռ-
նարկություններից և շինարարական մեխա-
նիղմներից։

Նախագծային կարողությունների վերա-
նայման համար հիմք ընդունել տեխնիկա-
կան նոր, ավելի բարձր նորմաները։ Առան-
ձին աղբեղատների սարքավորման կարողու-
թյունը վորոշող տեխնիկական այդ նորմա-
ները կազմել լավագույն ստախանովական-
ների ստուգված փորձի հիման վրա։

6. Առաջարկել Ծանր Արդյունաբերու-
թյան ժողովրդական Կոմիսարիատին՝ 1936
թվի սկզբներին ձեռնարկել արտադրական
նորմաների վերանայումը՝ դրանք վորոշ չա-
փով բարձրացնելու ուղղությամբ, վորի
համար նախապես, Ծանր Արդյունաբերու-
թյան ժողկոմատի հաստատած որացուցա-
յին պլանով, հրավիրել ճյուղային կոնֆե-
րմանցիաներ՝ գործարանների ու ձեռնարկու-
թյունների դիրեկտորների, ցեսերի պետե-
րի, ինժեներների, վարպետների ու ստախա-

նովականների մասնակցությամբ, վորտեղ
աւշիուշով, մանրամասնորեն ու կոնկրետ
կերպով քննել ինչպես ձեռնարկություննե-
րի սարքավորման կարողությունների տեխ-
նիկական նորմաները վերանայելու, այն-
պես և արտադրական նորմաները վերանա-
յելու հարցը:

7. Առաջարկել Ծանր Արդյունաբերու-
թյան ժողկոմատին՝ մշակել և հաստատել
դասազրելը, տեղեկատուները, հանրազի-
տարանները և ամեն տեսակ տեխնիկական
ձեռնարկները վերանայելու պլանը, գրանք
սարքավորման տեխնիկական նոր նորմանե-
րին համապատասխան դարձնելու համար:

8. Ծանր արդյունաբերության 255 դլիմա-
վոր մասնադիտությունների բանվորներին
պարտադիր կերպով տեխնիկական դիտելիք-
ների մինիմում ուսուցանելն ամբողջովին
արդարացրեց իրեն: Գետական տեխնիկական
քննություն տված 797,050 բանվորներից
գույք յեկան բավարար ստախանովական-

ներ, վորոնց թվում ընկերներ Ատախանովը,
Բուսիգինը, Արտյովիսովը և ուրիշ շատերը:
Առաջնակարգ խնդիր համարելով ծանր ար-
դյունաբերության բոլոր բանվորներին տեխ-
նիկական ուսուցման մեջ դլիմովին ընդդր-
կելը, Համեն (բ)կ կենտկոմի պլենումը Ծանր
Արդյունաբերության ժողկոմատին պարտա-
վորեցնում ե կիրառել հետեւյալ միջոցա-
ռումները.

ա) անհապաղ ընդարձակել պարտադիր
կերպով տեխնիկական մինիմումն անցնելիք
բանվորների շրջանակը, այնպիսի հաշվով,
վոր առաջիկա յերեք-չորս տարում տեխ-
նիկական ուսուցմամբ ընդդրկվեն ծանր
արդյունաբերության բոլոր բանվորները, և
տեխնիկական մինիմումի բովանդակությու-
նը վերանայել՝ ծանր արդյունաբերության
նոր հնարավորությունների և նոր խնդիր-
ների համաձայն.

բ) աչքի ընկնող բանվորների, ստախանո-
վական բանվորների համար կազմակերպել
աոցիալիստական աշխատանքի վարպետների

Հաստուկ դասընթացներ՝ առանց արտա-
ղրությունից կտրվելու, ընդունելով այդ
դասընթացներն այն ստախանովականնե-
րին, վորոնք տալիս են աշխատանքի բարձր
արտադրողականություն։

ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵՅՈՒՄ

1. ԹԵԹԿ արդյունաբերության մեջ ստա-
խանովյան շարժումը ծավալել նախ և ա-
ռաջ հումքի սկզբնական վերամշակման
ճյուղերում—բամբակագոտիչ գործարաննե-
րում, վուշի գործարաններում, կանեփի
գործարաններում, մետախսագործարաննե-
րում, կաշվի սուրոգատների ձեռնարկու-
թյուններում և ոժանդակ նյութերի, ու-
տալների ու մեքենաների արտադրության
մեջ։ Տեքստիլ ճյուղերում՝ առաջին հերթին
վուշի ու մետաքսի արդյունաբերության
մեջ և մանավանդ վուշ մանելու և մետախս
գործելու ձեռնարկություններում, բամբա-
կեղեն գործվածքների, տրիկոտաժի ու կա-

նեփ-ջութի արդյունաբերության մեջ, ա-
ռաջին հերթին մանելու ձեռնարկություն-
ներում և մատնավորապես սանրած ու վո-
լորած մանվածքի արտադրության մեջ։

Ստախանովյան շարժման կապակցու-
թյամբ խնայողություն մտցնել հումքի
ծախսման մեջ, հասցնել ավելցուկների ու
այրուքների լիակատար ոգտագործման,
փոխանյութերի լայն դարձացման ու ոգ-
տագործման, միաժամանակ բարելավելով
արտադրանքի տեսակն ու վորակը և եժա-
նացնել արտադրանքը։

2. Առաջարկել թեթև Արդյունաբերու-
թյան ժողկոմատին՝ սարքավորման ար-
տադրողականության նվաճումների և լա-
վագույն ստախանովականների աշխատանքի
փորձի հիման վրա, 1936 թվականի ըն-
թացքում վերանայել գոյություն ունեցող
ձեռնարկությունների սարքավորման տեխ-
նիկական նորմաները և արտադրական կա-
րողությունը՝ վերջիններս բարձրացնելու
ուղղությամբ, ինչպես և նոր կառուցվող

Քարրիկաների ու գործարանների նախադըռքային կային կարողությունները, կատարելով այդ աշխատանքը նախ և առաջ բամբակի ու վուշի գործարաններում, արդյունաբերության—վուշի, կանեփի, մետաքսի, կաշու և այլ ճյուղերում։

Ապահովել արտադրական կարողությունների ամենալիակատար ոլտագործումը և սարքավորման ոգտակար գործողության կոնֆիցիենտի բարձրացումը, վերացնելով մեքենաների, դաշտավահների ու ագրեգատների պարապուրդներն ու ավելացնելով նրանց արագությունը։ Ստախանովականների՝ մեծ թվով դաշտավահների ու մեքենաների սովասարկման անցնելիս ապահովել սարքավորման արտադրողականության հետագա բարձրացումը։

3. Տեխնիկական նորմաների վերանայմանը համապատասխան, վերանայել արտադրանքի նորմաները, թեթև արդյունաբերության ճյուղերում, դրանք վորոշ չափով բարձրացնելու և ավզությամբ։ Մանվածքի

և գործվածքի առաջարեցում միանման տեսակի ապրանքի արտադրության գծով սահմանել մի արտադրական բանվորի արտադրանքի նորմաները։ Վերանայել մի բանվորի կողմից դաշտավահների ու մեքենաների սովասարկման նորմաները, ստուգել խոսացված աշխատանքը կատարող բրիգագների կաղմն ու չափը և ասպահովել վարպետների ու յենթավարպետների համար աշխատանքի լավագույն պայմաններ ու նրանց շահագըրդը գլուխածությունն աշխատանքով։

Զեռնարկության համար տեխնիկական նորմաներ մշակելու և նրա կարողությունը վերանայելու համար առաջարկել թեթև Արդյունաբերության Ժողկոմատին 1936 թ. առաջին կիսամյակի ընթացքում հրավիրել ձեռնարկության դիրեկտորների, գլխավոր ինժեներների, ցեխերի պետերի, վարպետների, յենթավարպետների ու լավագույն ստախանովականների ճյուղային արտադրական կոնֆերենցիաներ՝ ավարտելով

այդ աշխատանքը մինչև 1937 թվականի արտադրական պլանները կազմելը:

4. Ինժեներա-տեխնիկական կազրեր լավագույն ձեռվ պատրաստելու խնդրի կապակցությամբ առաջարկել թեթև Արդյունաբերության ժողկոմատին՝ վերանայել ինժեներա-տեխնիկական կազմի պատրաստման սիստեմը, ինչպես և դասագրքերն ու աւելինիկական աեղեկատունները, վերացնելով տեխնիկական հիմն ցուցումները և տեխնիկական հիմն նորմանները:

Միջոցառումներ կիրառել ինժեներա-տեխնիկական կազմի, վարպետների ու յինթավարպետների վորակալավորումը բարձրացնելու համար, ապահովելով ինժեներա-տեխնիկական աշխատողների փորձի փոխանակումը Միության լավագույն ձեռնարկությունների հետ և արտասահմանյան տեխնիկայի փորձին ծանոթանալը:

Տեխմինիմումի գոյություն ունեցող ծրագրերի հետ միասին սահմանել տեխմինիմումի ավելի բարձր ծրագրեր և ապահովել

տեխնիկական մինիմումի թե՛ գոյություն ունեցող և թե՛ ավելի բարձր ծրագրի յուրացումը բոլոր բանվորների կողմից 1936 թ. և 1937 թ. ընթացքում, իսկ ստախանովական-վիճողբաղովականների համար կազմակերպել դասընթացների ու դպրոցների ցանց՝ առանց արտադրությունից կըտրելու:

5. Թեթև արդյունաբերության գծով յեղած աշխատավարձի սիստեմի թերությունները վերացնելու նպատակով ու նախ և առաջ «նորմանների ներսում» անթույլատրելի «պրոդրեսիան» վերացնելու համար, հանձնարարել թեթև Արդյունաբերության ժողկոմատին՝ ներկայացնել կենտկոմին ու ժողովական իր առաջարկները աշխատավարձը վերանայելու մասին, հաշվի առնելով առաջատար արտադրությունների բանվորների ու ինժեներների վորակալ կառերին նյութապես խրախուսելու անհրաժեշտությունը:

6. Թեթև արդյունաբերության մեջ հիմ-

նական պահանջը համարել մշտական որս-
տեմատիկ պայքարը՝ արտադրանքը բարե-
լավելու և նրա տեսակները բազմազան
դարձնելու համար, նրա վորակը բարձրաց-
նելու համար, արտադրանքի ավելի լավ ձե-
մավորման, նկարաղարդման, դռւնեղության
ու նրբության համար՝ համաձայն յերկրորդ
հնդամյակի պլանի լրիվ կատարման խընդ-
րին:

ԱՆԴԱՐԴՅՈՒՄ ԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՌԵԳՈՒՄ

Համկ(բ)կ կենտկոմի պլենումը ԽՍՀՄ-ի
սննդարդյունաբերության և սննդի ձեռ-
նարկությունների բոլոր գեկավարների առ-
ջև խնդիր ե զնում՝ ըստ ամենայնի ծավա-
լել ստախանովյան շարժումը, առաջին հեր-
թին շաքարավագի ու ռաֆինադի գործա-
րաններում, բիսկվիտի փարբեկաններում,
սպիրտի գործարաններում, ձկնարդյունա-
բերության մեջ, աղահանքերում և ծովի աղ
ստանալու վայրերում, վարեղ հռմքային

աեսուրսների առատությունը և ձեռնարկու-
թյունների տեխնիկական վերակառուցումն
ամենանպաստավոր պայմաններ են ստեղ-
ծում աշխատանքի արտադրողականության
բարձրացման և արտադրանքի արագ աճման
համար:

Սննդի ձեռնարկություններում ստախա-
նովյան շարժման ծալվամանը պետք ե ու-
ղեկցի արտադրության մեջ հումքի, կիսա-
ֆարբեկատների, փաթեթման և այլ նյու-
թերի կորստի առավելագույն կրծատման
համար մղվող մեր պայքարը և բանվորնե-
րին հումք ու նյութեր մատակարարելու
ամբողջ գործի արմատական բարելավումը
և ինքնարժեքի իջեցման համար մղվող
պայքարը:

Համկ(բ)կ կենտկոմի պլենումը ԽՍՀՄ-ի
Սննդարդյունաբերության Ժողկոմատին ա-
ռաջարկում ե՝

1. 1936 թվականի ընթացքում, ստախա-
նովյականների աշխատանքի փորձի հիման
վրա, վերանայել առանձին ադրեգատների,

սալարատների և կոնվեյերների ռեխիսնիկա-
կան իրական կարողությունը՝ վերջինս
բարձրացնելու ուղղությամբ, և դրա հի-
ման վրա սահմանել ձեռնարկությունների
արտադրական կարողությունը:

2. Հայտարերել և վերացնել ձեռնար-
կությունների կարողությունը նվազեցնող
նեղ տեղերը՝ 1936 թվականի հիմնական
ներդրումները կենտրոնացնելով առաջին
հերթին այդ նպատակի վրա:

3. Վերակառուցել ձեռնարկությունների
ղեկավարությունը, լայնորեն արմատացնե-
լով այն ստուգված փորձը, վորը ձեռք են
բերել ստախանովականներն աշխատավայրը
լավագույն էկրառու կազմակերպելու, աշ-
խատանքը բաժանելու և վորակյալ բանվոր-
ներին վոչ-վորակյալ աշխատանքից աղատե-
լու, աղքաղատների ու կոնվեյերների աշ-
խատանքային արագությունն ավելացնե-
լու, ձեռքի աշխատանքի պրոցեսները մե-
քենացնելու, սարքավորումը նոր ձեռվ,
մի բանվորի կողմից միքանի աղքաղատնե-

րի սպասարկումը հեշտացնող ձեռվ դասա-
վորելու, գործարանային ներքին տրանս-
պորտի և ոժանդակ ցեխերի աշխատանքը
բարելավելու, նորոգման գործն ավելի լավ
կաղմակերպելու և այլ ասպարեզներում:

4. Վերանայել գոյություն ունեցող տեխ-
նիկական հրահանգները, տեղեկատունները
և տեխնիկական ձեռնարկները և հրատարա-
կել նորերը՝ սննդարդյունաբերության ստա-
խանովականների աշխատանքի փորձի հիման
վրա:

5. Հաշվի առնել աշխատանքի կաղմա-
կերպման և տեխնոլոգիական պրոցեսի նոր
ձեռները՝ ստախանովականների աշխատանքի
փորձի հիման վրա և վերանայել ձեռնար-
կությունների տեխնիկական հնացած նոր-
մանները՝ նոր շինարարություն նախագծելու
ժամանակ ինչպես ձեռնարկությունների կա-
րողությունը հաշվելիս, այսպես ել աղքա-
ղատները դասավորելիս:

6. Հրավիրել սննդարդյունաբերության
ճյուղերում աշխատողների կոնֆերենցիա-

ներ՝ մասնակցությամբ դիրեկտորների, ին-
ժեներների ու ստախանովական բանվորնե-
րի, վերանայելու արտադրանքի տեխնիկա-
կան նորմաները՝ վերջիններս բարձարցնելու
ուղղությամբ, և դրան համապատասխան
վերանայելու արտադրանքի նորմաները՝
նրանք վորոշ չափով բարձրացնելու ուղղու-
թյամբ, ինչպես նաև ձեռնարկությունների
նեղ տեղերը լցնելու միջոցառումները մշա-
կելու համար՝ այսպիսի հաշվով, վոր նոր
նորմաները մտցվեն նոր սեղոնի սկզբից,
առաջին հերթին չափարի, աղի, ձկան ու
սպիրտի արդյունաբերության մեջ:

7. Ավելի լայն ծավալել բանվորների
տեխնիկական ուսուցման գործը, ապահովե-
լով տեխնիկական մինիմումի յուրացումը
սննդի ձեռնարկությունների բոլոր մշտա-
կան բանվորների, ինչպես նաև վորակյալ
սլորֆեսիաների պատկանող սեղոնային բան-
վորների կողմից, այնպիսի հաշվով, վոր
նրանք տեխնիկական մինիմումից պետական

քննությունն տան 1936 և 1937 թվականների
ընթացքում:

Տեխնիկական մինիմումից քննությունն
բունած բանվորների համար կաղմակերպել
ավելի բարձր տիպի հատուկ դասընթացներ,
վորոնք ավարտողները պետք ե պետական
քննությունն տան յերկրորդ աստիճանի
տեխնիկական դիտելիքներից, առանց ար-
տադրությունից կարգվելու:

Ձեռնարկությունների դիրեկտորների,
ինժեներների, քիմիկոսների և տեխնիկների
համար ավելի լայն ծավալել կատարելու-
գործման կարծատե դասընթացները, մաս-
նավորապես ողտագործելով դրա համար
արտադրության սեղոնային ընդմիջումները:

1936 թվականին կատարելագործման դա-
սընթացներից անցկացնել շաքարի, սպիր-
տի, մսի, ձեթի ու հրուշակային արդյունա-
բերության ինժեներա-տեխնիկական աշխա-
տողների մեծամասնությունը:

8. Համեմատական կենտրոնի սպառական առաջ-
ական առաջնորդը և սպառական առաջնորդը:

զեկավարներին՝ հաշվի առնել, վոր ստա-
խանովյան շարժումը սննդարդյունաբնրու-
թյան առջև վո՛չ միայն խնդիր և դնում ա-
վելացնել աշխատանքի արտադրողականու-
թյունը և բաց թողնվելիք արտադրանքի
քանակը, այլև պահանջում և առավելա-
դույն չափով բարեկավել սննդամթերքի
համն ու սննդարար հատկությունները,
բարելավել նրանց փաթեթումը, դարդարու-
մը, ճոխացնել տեսակները համաձայն աշ-
խատավորների մեծացած պահանջների և
խորհրդային առևտորի ծավալման:

ԱՆՏԱՐԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵՁՈՒՄ

1. Ծավալել ստախանովյան շարժումն
անտառանյութերի մթերման ասպարեզում,
առաջին հերթին մեքենայացված կետերում,
արմատախիլ անելով փայտամթերման ա-
պարատի հետամնաց մասի հակամեքենա-
յացման արամագրությունները: Թողքի ար-
դյունաբերության մեջ ցելյուլոզ ու փայ-

տանյութ մշակող կիսաֆարբիկատային ցի-
լերում ավելացնել մի յեփակաթսայի խո-
րանարդ մետրից ստացվող ցելյուլոզի քա-
նակը, ինչպես և ավելացնել թուղթ չինող
մեքենաների արտադրանքը: Փայտի սղոցման
ասպարեզում կենտրոնանալ հումք տվող
մի հերթավոխ-շրջանակի արտադրողակա-
նությունը բարձրացնելու վրա, մանակ'անդ
ավելի լավ սարքավորված ձեռնարկություն-
ներում, ավելացնելով սղոցված նյութի ար-
տադրանքը: Կահույքի, ֆաների և լույսկան
արդյունաբերության մեջ բարձրացնել սար-
քավորման արտադրողականությունը, լա-
րելավել արտադրանքի վորակը: Փայտաքի-
միական արդյունաբերության մեջ ավելաց-
նել արտադրանքի քանակը և արագացնել
ապարատների շրջանառությունը: Անտառա-
յին արդյունաբերության մեջ առանձնապես
կարևոր խնդիրը համարել փայտեղենի
ինքնարժեքի իջեցումը:

2. Առաջարկել Անտառային Արդյունաբե-
րության ժողովրդական կոմիսարիատին՝

կական ուսուցումն այն հաշվով, վոր յեր-
կու տարվա ընթացքում ընդդրկվեն բոլոր
Հիմնական մասնագիտությունների բան-
փորները։ Վերանայելով տեխնիկական
մինիմումի բովանդակությունը, 1936 թվա-
կանի ընթացքում, արտադրությունից
չկտրված կարճատև դասընթացներում ընդ-
դըրկել գլխաւոր պրոֆեսիաների բանվորնե-
րին, առաջին հերթին թղթի, փայտամշ-
շակման ու փայտաքիմիական արդյունաբե-
րության մեջ, և առաջ փայտեղենի մթեր-
ման ու փոխադրման կաղըային բանվորնե-
րին, սահմանելով պետական-տեխնիկական
քննություն։

5. Պարտավորեցնել Անտառային Արդյու-
նաբերության ժողկոմատին՝ ապահովել
ստախանովական բանվորների տեխնիկական
վորակավորման բարձրացումը, կազմակեր-
պելով ինչպես մասնավիտական կարճատև
դասընթացներ, խմբակներ, այնպես ել ան-
հատական ուսուցման միջոցով բարձրացնե-
լով վո՛չ միայն նրանց վորակավորումն,

այլև հանրակրթական ու կուսարական-
քաղաքական մակարդակը։

ԵԵԿԱՅԹՈՒԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՍՊԱՐԵՁՈՒՄ

1. Ստախանովյան շարժումը ծավալել ա-
ռաջին հերթին շողեքարշերի, վագոնների ու
ճանապարհի նորոգմամբ դրաված աշխա-
տողների և շահագործման գծով աշխատավ-
ների մեջ, վորոնք հետ են մնում մեքենա-
վարներից։

Շահագործման բաժնում ստախանովյան
շարժման հիմնական խնդիրն ե՝ բարելավել
կայարանների աշխատանքը, ապրանքատար
և մանավանդ մարդատար գնացքների ու-
ղարկումն ու վարումը ճշտիվ չվացուցակի
համաձայն, և ե'լ ավելի բարձրացնել վա-
զոնների առևտրական արագությունն ու
որական միջին վաղքը, կրծատել վագոննե-
րի կանգառումը կայարաններում և բեռնե-
լու ու բեռնաթափելու համար։

Շողեքարշային ու վագոնային տնտեսաւ-

թյան մեջ ստախանովլյան-կրիվոնոսյան
շարժումը պետք ե ուղղված լինի՝ բարձրա-
ցնելու նորոգման վորակը և կրծատելու. նրա
ժամկետները, անխափան մատակարարելու
չողեքարչերը դնացք կազմելու համար, ամ-
րացնելու դնացքների անցումը լիակատար
ինքնարդելակման, ցանցի դեպոների մեծ
մասում տեխնիկական արագությունը հաս-
ցնելու առաջավոր դեպոների հասած մա-
կարդակին, ավելացնելու չողեքարչերի ո-
րական միջին վաղքը և տնտեսելու վառելա-
նյութը:

Գծի տնտեսության ասպարեզում ստախա-
նովլյան շարժման նպատակը պետք ե լինի՝
նախ և առաջ լավորակ վիճակում պահել
ուղին և վերացնել նրա անկանոնություն-
ները:

Եերկաթուղային տրանսպորտի բոլոր բա-
ժինների և բոլոր պլոտենսիաների համար
պարագիր առաջնակարգ պահանջ ե՝ կա-
տարել առանց ավարիայի աշխատանք։ Ա-
ռանց ավարիայի և խորտակման աշխատան-

քը հանդիսանում ե ստախանովլյան-կրիվո-
նոսյան աշխատանքի վճռական ցուցանիշը
տրանսպորտում։

2. Առաջարկել Հաղորդակցության ձանա-
պարհների ժողովրդական կոմիսարիատին՝
1936 թվականին ավարուել տեխնիկական
նորմաների 1935 թվականին սկսված վերա-
նայումը, նպատակ դնելով բարձրացնել
շարժական կաղմի, գծի և սարքավորման
թողարկման ունակության ողտագործումը։
Վերանայումը կատարել առաջին հերթին
Հաղորդակցության ձանապարհների ժողով-
մատի գործարաններում, բեռնման ու բեռ-
նաթափման և տեսակավորման կայարաննե-
րում և չողեքարչերի, վագոնների և ճանա-
պարհների նորոգման բնադավառում։

Մինչև 1936 թ. ապրիլ ամիսը վերանայել
դնացքների յերթեեկության դրաֆիկը և
գծերի, առաջին հերթին ամենալարված
գծերի, թողարկման ունակությունը։

3. Առաջարկել Հաղորդակցության ձանա-
պարհների ժողովրդական կոմիսարիատին՝

1936 թ. յերկրորդ յեռամսյակից ձեռնարկել արտադրական նորմաների վերանայմանը, նպատակ դնելով վորոշ չափով բարձրացնել գրանք, հաջվի առնելով տեխնիկական նոր նորմաները։ Դրա համար նախապես, Հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարիատի հաստատած որացուցային պլանով, համապատասխան խորհրդակցություններ հրավիրել ըստ տընտեսության ճյուղերի ու յերկաթուղային տրանսպորտի աշխատողների կարևորագույն կատեգորիաների — ստախանովականների, վարսկետների, ինժեներների ու հրամանատարների մասնակցությամբ։

Ավելացնել անհատական դորձավարձով աշխատողների թիվը, կիրառել վարձատըրաման ոեկորդային սխտեմը ճանապարհային ու շինարարական աշխատանքներում, մեքենավարների որինակով իրեն արդարացրած աշխատանքի վարձատրության պրոդրեսիվ-դորձավարձային սխտեմը կիրառել նաև

արածնապարագի մյուս աշխատավորների նկատմամբ։

4. Առաջարկել Հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարիատին՝ հիմնվելով ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերից ավելի տրանսպորտում բուն զրած պահպանողական տարրերի մերկացման փորձի վրա՝ կազմակերպել դասադրքերի, տեղեկատունների, հանրագիտարանների և ամեն տեսակ տեխնիկական ձեռնարկների ու հրահանգների վերանայումը, նպատակ դնելով համապատասխան դարձնել զրանք տրանսպորտի աշխատանքի նոր պրակտիկային և տեխնիկական նոր նորմաներին։

5. Առաջարկել Հաղորդակցության ճանապարհների ժողովումատին՝ կազմակերպել տեխնիկական գիտելիքների ուսուցումը նըլազագույն ծրագրով, առանց արտադրությունից կտրվելու՝ նախ և առաջ յերկաթուղային տրանսպորտի օտորին հրամանատարական կազմի ու գլխավոր մասնադիր

տությունների բանվորների համար՝ 1936
թվականի ընթացքում տեխնիմումը սովորեցնել առնվազն 500.000 բանվորների։ Մըջակել բանվորների ավելի ընդարձակ խավերն ուսուցմամբ ընդգրկելու ծրագիր,
այնպիսի հաշվով, վոր յերկու-յերեք տարվա ընթացքում տեխնիկական մինիմումն անցնեն յերկաթուղային տրանսպորտի բուր բանվորները։

Կազմակերպել առաջավոր ստախանուկական-կրիվոսասական բանվորների ավելի վորակալ տեխնիկական ուսուցումը՝ առանց արտադրությունից կտրելու, իսկ անհրաժեշտ դեպքում նաև արտադրությունից կտրելով, ավելի բարձր ծրագրով, ապահովելով նրանց դաստիքերով ու վորակալ դասատուներով։

